



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Կառավարության 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ կարևորվել է այն հանգամանքը, որ կոռուպցիայի կանխարգելման միջոցով հնարավոր է դառնում հանրային պաշտոն զբաղեցնող ազնիվ, բարեխիղճ և գործունյա անձի և ծառայողի կերպարի ստեղծումը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը: Այս տեսանկյունից 2019-2022թթ. հակակոռուպցիոն քաղաքականությունը ուղղված էր բարեվարքության ստուգման այնպիսի նոր գործիքակազմի ներդրմանը, որը հնարավորություն կտար ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքությունը: Ըստ այդմ, 2020 թվականին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով ԿԿՀ-ին է վերապահվել պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացումը՝ այն սահմանափակելով որոշակի հանրային պաշտոններ զբաղեցնելու համար բարեվարքության ուսումնասիրությամբ: Միևնույն ժամանակ, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների հրապարակային չլինելը հնարավորություն չի տալիս հանրային վերահսկողության մեխանիզմների միջոցով ևս ամրապնդել բարեվարքության համակարգը: Հարկ է հաշվի առնել նաև բարեվարքության ուսումնասիրության շրջանակում քննարկվող՝ օրենքով գաղտնիք հանդիսացող տեղեկությունների, երրորդ անձանց մասին տեղեկությունների և անձնական տվյալների, անձի մասնավոր կյանքին առնչվող տեղեկությունների և օպերատիվ հետախուզական ճանապարհով ստացված տեղեկությունների առկայության հանգամանքը, ինչպես նաև դրանց հրապարակայնության առնչությամբ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները և օտարերկրյա պետությունների փորձը, որի համատեքստում



անհրաժեշտություն է առաջանում դիտարկել հրապարակայնության պահանջի սահմանման նպատակահարմարության հարցը: Նշյալից բացի, առկա են բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը նվազեցնող խոչընդոտներ և հանգամանքներ, ինչպես օրինակ, ԿԿՀ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը չհրապարակելը:

Ըստ այդմ՝ Հակակոռուպցիոն բարեփոխումների ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 1.15-րդ գործողությամբ նախատեսվել է ԿԿՀ բարեվարքության եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնության սահմանում, որը հիմնականում առնչվում է դատավորների դատախազների և քննիչների գործունեությանը: Նշված հարցերին անդրադարձ է կատարվել միջազգային տարբեր կառույցների զեկույցներում և գնահատականներում: Այսպես՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Հայաստանի վերաբերյալ 5-րդ փուլի գնահատման զեկույցում՝ ՏՀՀԿ գնահատող թիմը, անդրադառնալով բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների դերին, առաջարկել է, որ պաշտոնատար անձանց նշանակման գործընթացները լինեն թափանցիկ՝ ամրապնդելով հանրային վստահությունը տվյալ գործընթացների նկատմամբ:

- «ԱՄՆ Պետքարտուղարության Հայաստանում 2023թ. մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ զեկույցում»² նշվել է, որ ԿԿՀ-ի կողմից կատարվող բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները հրապարակային չեն:

Փաստացի միջազգային կազմակերպությունները ուղղակիորեն կոչ չեն անում սահմանելու բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների կամ դրանց եզրափակիչ մասերի հրապարակայնություն: Սակայն վերջիններս մատնանշում են դատավորների ընտրության գործընթացում բարեվարքության վերաբերյալ եզրակացության առավել վճռորոշ դերի

¹ Տե՛ս ՏՀՀԿ Հայաստանի 5-րդ գնահատման զեկույցը, էջ 97, 103-106, 123

https://www.oecd-ilibrary.org/governance/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fb158bf9-en

² Տե՛ս <https://am.usembassy.gov/2023-human-rights-report-on-armenia/>, էջ 28-29



անհրաժեշտության մասին, ինչին մեծապես կօժանդակի վերջինիս հրապարակայնության պահանջի սահմանումը: Չնայած նշված զեկույցները անդրադառնում են դատավորների ընտրության հարցին, սակայն նույն չափանիշները, ըստ էության, կիրառելի են ողջ դատաիրավական համակարգի, այդ թվում նաև՝ դատախազների և քննիչների նկատմամբ:

Բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հրապարակայնության անհրաժեշտության մասին բարձրաձայնում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները՝ դատավորների ընտրության գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից³:

Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում ապահովել բարեվարքության գնահատման մեխանիզմների հրապարակայնությունը՝ միաժամանակ հավասարակշռելով գնահատում անցնողների անձնական տվյալների և հեղինակության պաշտպանության անհրաժեշտությունը և դատական, դատախազական և քննչական մարմինների նկատմամբ արդյունավետ հանրային վերահսկողության իրականացնելու կարևորությունը:

Ամբողջ վերոգրյալը ցույց է տալիս բարեվարքության ուսումնասիրության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը:

Խնդրի շուրջ արդյունավետ լուծումներ ներկայացնելու նպատակով, նախևառաջ, անհրաժեշտ է անդրադառնալ դրանց վերաբերելի միջազգային չափանիշներին և այն հիմնական սկզբունքներին, որոնք պետք է հաշվի առնել հնարավոր լուծման եղանակները դիտարկելիս: Այսպես՝

- Յուրաքանչյուր մոդելի ընտրության դեպքում անհրաժեշտ է դիտարկել դրա անհրաժեշտությունը Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և դատաիրավական համակարգի բարեփոխման անհրաժեշտության համատեքստում՝ հաշվի առնելով երկրում կոռուպցիայի և բարեվարքության համակարգի մակարդակը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի արդեն իսկ առկա գործիքակազմերը:

³ Տե՛ս «ԻՊԱԱ» ՀԿ-ի կողմից իրականացվել է հակակոռուպցիոն դատարանի ձևավորման վերաբերյալ զեկույցը, էջ 59-60, <https://prwb.am/2023/06/20/zekuyec-7/>



- Լուծումները ներդնելիս անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքները:

- Ստուգվող անձինք պետք է օժտված լինեն ՄԻԵԿ 6-րդ հոդվածով սահմանված բավարար ընթացակարգային երաշխիքներով իրենց տեսակետը պաշտպանելու և հավասար կերպով ներկայացնելու համար:

- Բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները հրապարակելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, որը ենթադրում է խիստ անձնական տվյալների և, հատկապես, երրորդ անձանց վերաբերյալ տվյալների սահմանափակում: Վենետիկի հանձնաժողովը «Բարեվարքության ստուգման» Ուկրաինայի օրենքի վերաբերյալ իր դեռևս 2015 թվականի միջանկյալ կարծիքում ողջունել է այն հանգամանքը, որ բարեվարքության ստուգման սկզբունքներում ամրագրված է բարեվարքության ստուգման ընթացքում հավաքագրված տեղեկատվության չբացահայտման և անձնական բնույթի տեղեկատվության գաղտնիության պահպանման սկզբունքները⁴:

- Պատճառաբանված և մանրամասն փաստահեն բարեվարքության ուսումնասիրության եզրակացությունը կարևոր է իրավական որոշակիության և արդյունավետ բողոքարկման հնարավորությունից օգտվելու համար:

- Եզրակացություն կազմելու ընթացքում պետք է ապահովել անձի լսված լինելու իրավունքը, հնարավորություն տալ մասնակցել վարույթին:

- Կարող է դիտարկվել եզրակացությունների մասնակի կամ միայն եզրափակիչ մասի հրապարակման հնարավորությունը կամ միայն հրապարակվել բարեվարքություն անցած թեկնածուի անուն ազգանունը և եզրակացության արդյունքը:

Տվյալ խնդրի շուրջ լուծումներ առաջարկելու նպատակով դիտարկվել են նաև երեք համադրելի պետությունների՝ Մոլդովայի, Ուկրաինայի և Ալբանիայի փորձը և պրակտիկան,

⁴ Տե՛ս CDL-AD(2015)031-e Interim Opinion on the Draft Law on Integrity Checking of Ukraine, adopted by the Venice Commission at its 104th Plenary Meeting (Venice, 23-24 October 2015)



որոնք ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում: Հարկ է նշել, որ երեք երկրներում գործում են զուգահեռ երկու՝ մեղմ և կոշտ մեխանիզմներ, որոնք տարբերվում են բարեվարքության ուսումնասիրությունների հրապարակայնության առումով:

ՄՈԼԴՈՎԱ		
Չափանիշներ	Մեղմ ընթացակարգեր՝ ավելի մեղմ հրապարակայնության ռեժիմով և պահանջներով	Կոշտ ընթացակարգեր՝ հրապարակայնության բարձր շեմով
Ստուգվող սուբյեկտների և ստուգող մարմինների շրջանակ	Գործում է առանձին բարեվարքության ստուգման ընթացակարգ բոլոր գործող դատավորների համար, որի չափանիշներն ու հրապարակայնության պայմաններն ավելի ցածր են, քան կոշտ վեթինգի չափանիշները բարձրագույն դատական և դատախազական մարմինների անդամների ընտրության համար սահմանվածները: Բարեվարքության այդ ստուգումներն իրականացվում են Բարձրագույն մագիստրների խորհրդի պահանջով երկու մասնագիտացված մարմինների կողմից. դրանք են՝ կոռուպցիայի կանխարգելման մարմինը՝ Ազգային բարեվարքության գործակալությունը (National	«Դատավորների և դատախազների արտաքին գնահատման մասին» օրենքի հիման վրա Նախնական վեթինգի հանձնաժողովը գնահատում է դատական և դատախազական բարձրագույն ինքնակառավարման մարմինների (Բարձրագույն դատական և Բարձրագույն դատախազական խորհուրդներ) և դրանց մասնագիտացված մարմինների (Գնահատման հանձնաժողովներ, Կարգապահական հարցերով հանձնաժողովներ) անդամների թեկնածուների ֆինանսական և էթիկական բարեվարքությունը: Տվյալ մեխանիզմը՝ իր ամբողջ կառուցակարգերով, մշակվել և ներդրվել էր որպես ժամանակավոր միջոց դատական և դատախազական մարմինների վեթինգի/զտման համար: Այսինքն, մանդատի ավարտից հետո Նախնական



	Integrity Agency⁵), ինչպես նաև հակակոռուպցիոն քննչական մարմինը՝ Ազգային հակակոռուպցիոն կենտրոնը (National Anti-corruption center⁶): Մոլորվելու և այս տեսակ բարեվարքության ստուգման հետ թեկնածուներն առնչվում են, երբ գնահատում են անցնում թափուր հաստիքների մրցույթի համար: Նմանատիպ ընթացակարգ նախատեսված է նաև այն դատավորների համար, որոնք գնահատում են անցնում դատական համակարգում ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելու համար: Գնահատման ընթացքում ԲՄԽ-ն դիմում է Ազգային բարեվարքության գործակալությանը և Ազգային հակակոռուպցիոն կենտրոնին բարեվարքության ստուգում կազմակերպելու համար: Այս ստուգման ընթացակարգն իրականացվում է ընթացիկ հայտարարագրերի, հնարավոր	վերինգի հանձնաժողովը կդադարի գոյություն ունենալ կամ վերափոխվի այլ մեխանիզմի:
--	--	---

⁵ Համարժեք է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, քանի որ ստուգում է հայտարարագրերը, շահերի բախման դեպքերն է ուսումնասիրում և այլ սահմանափակումներ:

⁶ Համարժեք է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին, քանի որ մասնագիտացված քննչական մարմին է, քննություն է իրականացնում կոռուպցիոն հանցագործություններով, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու մանդատ ունի:



	շահերի բախման դեպքերի ստուգման հիման վրա: Յուրաքանչյուր 5 տարին մեկ լրացուցիչ ստուգումներ են անցկացվում բոլոր գործող դատավորների համար:	
Հրապարակայնություն	Գործող դատավորների ստուգման դեպքում ոչ թե վերջնական բարեվարքության վերաբերյալ որոշում է ընդունվում, այլ զեկույց, որը խորհրդատվական բնույթ է կրում: Այն հրապարակային չէ:	Ոչ միայն հրապարակային են վերջնական որոշումները, այլև թափանցիկ է բարեվարքության ուսումնասիրության գործընթացը: Օրինակ՝ Հանձնաժողովի կողմից անձի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումից հետո թեկնածուն հրավիրվում է հրապարակային լսումների, որոնք դռնբաց են, իսկ ծայնագրությունը հետո հրապարակվում է Հանձնաժողովի կայքէջում⁷, եթե թեկնածուները առարկություններ չունեն: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ դռնբաց լսումները կարող են վնասել հասարակական կարգին, բարոյական սկզբունքներին: Եթե թեկնածուն չի ներկայանում լսումներին, ապա դրանք կարող են տեղի ունենալ առանց թեկնածուի մասնակցության հավաքագրված նյութերի հիման վրա: Հանձնաժողովը հրապարակում է Դատավորների բարձրագույն

⁷ [Law-26-2022_amended-22.08.2023-.pdf \(vetting.md\)](#) , Հոդված 12



		խորհրդի թեկնածուների (դատավորների) բարեվարքության վերաբերյալ գնահատման վերջնական արդյունքները՝ Հանձնաժողովի եզրակացությամբ (դրական կամ բացասական)⁸ պատճառաբանված որոշմամբ, որոնք ուղարկվում են նաև թեկնածուների էլեկտրոնային հասցեներին:⁹ Նույն օրը Հանձնաժողովն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է տեղեկություններ թեկնածուի՝ բարեվարքության գնահատման անցնելու կամ չանցնելու մասին: Եթե բարեվարքության վերաբերյալ որոշումը թեկնածուին ուղարկելուց հետո 48 ժամվա ընթացքում վերջինս չի ծանուցում Հանձնաժողովին իր վերաբերյալ որոշումը հրապարակելուց հրաժարվելու մասին, ապա թեկնածուի գնահատման մասին որոշումը հրապարակվում է ընտրությունների կամ մրցույթի կազմակերպման համար պատասխանատու կազմակերպության կայքէջում՝ անհրաժեշտության դեպքում՝ ապանձնավորված, բացառությամբ թեկնածուի անուն-ազգանվան, ինչը մնում է հրապարակային:
--	--	--

⁸Օրինակները հասանելի են Հանձնաժողովի կայքէջում՝ <https://vetting.md/>

⁹ https://vetting.md/wp-content/uploads/2023/10/Law-26-2022_amended-22.08.2023-.pdf



Այլ ընթացակարգային պահանջներ	Եթե գործող դատավորները դիմում են Բարձրագույն մագիստրների խորհուրդ և չեն անցնում վեթինգը, ապա կարող են պաշտոնավարել որպես սովորական դատավոր:	Բարեվարքության ստուգման փուլում թեկնածուն արդեն հնարավորություն է ունենում իր տեսակետը ներկայացնել, բացատրությունները և լրացուցիչ տեղեկություններ հայտնել Նախնական վեթինգի հանձնաժողովին, ներկայանալ իր վերաբերյալ լսումներին փաստաթանի հետ և լսումներից երեք օր առաջ ծանոթանալ իր մասին հավաքագրված նյութերին: Մոլորվական բարեվարքության ստուգման մոդելի հիմնական տարբերությունը հայկական մոդելից այն է, որ Մոլորվայի գնահատման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ որոշումը փաստորեն որոշիչ նշանակություն ունի թեկնածուին մրցույթից հեռացնելու համար: Այսինքն, բարեվարքության ստուգումը չանցած անձը ինքնաբերաբար դուրս է մնում տվյալ թափուր հաստիքի համար անցկացվող մրցույթից կամ ընտրությունից:
---	--	---

ՈՒԿՐԱԽՆԱ



Չափանիշներ	Մեղմ ընթացակարգեր՝ ավելի մեղմ հրապարակայնության ռեժիմով և պահանջներով	Կոշտ ընթացակարգեր՝ հրապարակայնության բարձր շեմով
Ստուգվող սուբյեկտների և ստուգող մարմինների շրջանակ	Դատավորների ընտրության և առաջին ատյանի դատարաններում թափուր հաստիքների համալրման նպատակով գործում է բարեվարքության ստուգման ընթացակարգ, որը չունի հստակ չափանիշ և մեթոդաբանություն: Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իր կայքում տեղադրում է թափուր տեղերի, ընտրության պահանջների մասին տեղեկություններ, ստանում դիմումներ, ընտրում դրանց միջից: Հանձնաժողովն ինքն է ստուգում դատավորների թեկնածուների բարեվարքությունը՝ հենվելով ընդհանուր կապերի վերաբերյալ ստացված տվյալների հիման վրա: Դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը ստուգում է թեկնածուների բարեվարքությունը և առաջարկ	«Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» օրենքը սահմանում է, որ դատավորի/դատավորի թեկնածուի Որակավորման գնահատումն իրականացվում է Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից: ¹⁰ Տվյալ ընթացակարգը կիրառվում է Ուկրաինայում դատավորների, ինչպես նաև առաջխաղացման ենթակա կամ թափուր հաստիքների դիմած դատավորների վեթինգի կամ բարեվարքության ստուգման նպատակով ¹¹ : Դատավորի որակավորման գնահատման հիմք կարող են լինել. 1) որակավորման գնահատում անցնելու դատավորի/թեկնածուի դիմումը, այդ թվում՝ որևէ մրցույթին մասնակցելու նպատակով, 2) Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշումը օրենքով սահմանված դեպքերում դատավորի

¹⁰ THE LAW OF UKRAINE On the Judiciary and the Status of Judges (The Official Bulletin of the Verkhovna Rada of Ukraine (BVR), 2016, № 31, Article 545); Chapter 5; https://vkksu.gov.ua/sites/default/files/field/file/lu_jst.pdf

¹¹ OECD (2024), Review of Anti-Corruption Reforms in Ukraine under the Fifth Round of Monitoring: The Istanbul Anti-Corruption Action Plan, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/9e03ebb6-en>



	ներկայացնում Արդարադատության բարձրագույն խորհրդին: Դրան հետևում է Արդարադատության բարձրագույն խորհրդի որոշումը ներկայացնել տվյալ թեկնածուին նախագահի հաստատմանը: Այստեղ հատկանշական է, որ Բարեվարքության հարցերով հանրային խորհուրդը ոչ մի դեր չունի:	որակավորման գնահատում նշանակելու վերաբերյալ¹²: Որակավորված ընթացակարգ կարող է նախաձեռնվել նաև դատավորի վերաբերյալ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացման դեպքում: Հիմնական ներգրավված ինստիտուտներն են՝ Ոսկրահնայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովը, որին աջակցում է Բարեվարքության հարցերով հանրային խորհուրդը և Բարձրագույն արդարադատության խորհուրդը¹³:
Հրապարակայնություն		Ամբողջ գործընթացն աչքի է ընկնում թափանցիկության բարձր աստիճանով: Արդյունքները հրապարակվում են, ներառյալ դույնները՝ բոլոր համապատասխան տեղեկություններով և միավորներով՝ նշելով գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի համար դատավորի/թեկնածուի ստացած միավորները: Որակավորման գնահատում անցնողների հարցազրույցները տեսահեռարձակվում են առցանց, իսկ վերջնական որոշումները նույնպես հրապարակվում

¹² Ընդ որում հերթական որակավորման գնահատումը չի կարող լինել մեկ տարուց ավելի շուտ, բացառության այն դեպքերի, երբ դատավորը դիմում է թափուր հաստիքի համար:

¹³ Համարժեք է ՀՀ ԲԴԽ-ին, դատական համակարգի ինքնակառավարման բարձրագույն մարմինն է:



		են:¹⁴ Բարեվարքության հարցերով հանրային խորհրդի բարեվարքության եզրակացությունները նույնպես ամբողջությամբ հրապարակվում են Խորհրդի կայքէջում¹⁵: Դատավորի/դատավորի թեկնածուի վերաբերյալ դույնները հանրությանը հասանելի են բացառապես Ոսկրահայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի պաշտոնական կայքում¹⁶, բացառությամբ անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների, օրինակ՝ բնակության/ գտնվելու վայր, ծննդյան ամսաթիվ, հասցե, հեռախոսահամար, էլ. փոստ, հարկ վճարողների հաշվառման համար, անձնագրի սերիա, գույքի գտնվելու վայրը, ինչպես նաև տվյալներ դատավորի/դատավորի թեկնածուի անձնական բարոյահոգեբանական որակներ, կարողությունների և բժշկական տվյալների ստուգմանն ուղղված թեստերի արդյունքներ, անչափահասների մասին ցանկացած տեղեկություններ, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ և այլն: Մինչդեռ դատավորի դույնի ամբողջական տարբերակը հասանելի է
--	--	---

14 https://vkksu.gov.ua/sites/default/files/poriadok_new.pdf ; Ընթացակարգն ու մեթոդաբանությունը ենթակա են հաստատման Ոսկրահայի դատավորների Բարձր Որակավորման հանձնաժողովի կողմից:

¹⁵ <https://grd.gov.ua/>
<https://grd.gov.ua/conclusions/>

¹⁶ <https://grd.gov.ua/conclusions/>



		Դատավորների Բարձրագույն Որակավորման հանձնաժողովի, Բարձրագույն արդարադատության խորհրդի անդամներին, ինչպես նաև Դատական դեպարտամենտի լիազորված ներկայացուցիչներին: Բարեվարքության հարցերով հանրային խորհուրդը նույնպես ունի տվյալ դոսյեին ամբողջական հասանելիություն՝ օրենքով սահմանված կարգով: Որակավորման գնահատում անցնող դատավորներն ու թեկնածուները կարող են ծանոթանալ ամբողջական դոսյեին:
--	--	--

ԱԼԲԱՆԻԱ

Չափանիշներ	Մեղմ ընթացակարգեր՝ ավելի մեղմ հրապարակայնության ռեժիմով և պահանջներով	Կոշտ ընթացակարգեր՝ հրապարակայնության բարձր շեմով
Ստուգվող սուբյեկտների և ստուգող մարմինների շրջանակ	Սովորական բարեվարքության ստուգման ընթացակարգն ունի ավելի մեղմ չափանիշներ և ավելի ցածր հրապարակայնության	Իրականացվում է գործող դատավորների և դատախազների համար հիմնարար վեթինգի կազմակերպման նպատակով ¹⁸ :

¹⁸ Վեթինգ մարմնի լիազորությունները ավարտվում են 2024թ-ին, մինչդեռ իր Վերաքննիչ ատյանը կշարունակի գործել մինչև 2026 թվական: Արդեն մեկ անգամ տվյալ մարմնի մանդատը երկարացվել է՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2021\)053-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2021)053-e)



	պահանջներ, քանի որ այն չի կիրառվում գործող դատավորների նկատմամբ, այլ նոր համակարգ մուտք գործող թեկնածուների նկատմամբ: Դատավորների թեկնածուները մինչև համակարգ մուտք գործելը վերինգ են անցնում Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) կողմից, որն իրականացնում է HIDACCHI-ի (լիազորություններով համարժեք է Հայաստանի ԿԿՀ-ին)¹⁷ և Գաղտնի ծառայության տրամադրած զեկույցների վրա: Բայց ԲԴԽ դեռևս ունի այդ զեկույցը ընդունել-չընդունելու կամ նույնիսկ ներկայացված փաստերը ինքնուրույն ստուգելու լիազորությունը: Տվյալ դեպքում, HIDACCHI ներկայացված եզրակացությունները հրապարակային չեն,	Վերինգի համար ստեղծվել է Վերինգի մարմինը, որին կից գործում է հատուկ Միջազգային Մոնիթորինգային Խումբը (International Monitoring Operation¹⁹): Դատավորների և դատախազների վերինգը ներառում է հետևյալ երեք բաղադրիչները՝ ա.գույքի գնահատում, բ.կապերի գնահատում/ Background assessment, գ.մասնագիտական հմտությունների գնահատում:
--	---	--

¹⁷ High Inspectorate of Declaration and Audit of Assets and Conflicts of Interest (HIDAACI) գործում է «Ընտրված անձանց և առանձին պետական պաշտոնատար անձանց ակտիվների, ֆինանսական պարտավորությունների հայտարարագրման և աուդիտի մասին» օրենքի համաձայն: Պատասխանատու է պետական պաշտոնյաների հայտարարագրերի անմիջական վերահսկողության համար, հայտարարագրերի վերաբերյալ տվյալների հավաքման և ուսումնասիրման համար, շահերի բախման կանխարգելման համար օրենքի և օրենսդրության, ինչպես նաև ազդարարողների պաշտպանության և ազդարարների մասին օրենքի կիրարկման համար և այլն: https://rai-see.org/wp-content/uploads/2015/08/Albania_Declaration_of_Assets_Law_9049_2003_EN.pdf

¹⁹ https://www.eeas.europa.eu/delegations/albania/international-monitoring-operation_en?s=214



	սակայն ԲԴԽ պարտավոր է դրանք տրամադրել ստուգում անցնողներին ծանոթանալու և իրենց պաշտպանությունը կազմակերպելու համար: Սա իրենից ներկայացնում է հայտարարագրի ստուգում, ինչպես նաև կապերի ստուգում/background check, որը գրավոր ընթացակարգով է կատարվում:	
Հրապարակայնություն	Սովորական բարեվարքության ստուգման ընթացակարգն ունի ավելի մեղմ չափանիշներ և ավելի ցածր հրապարակայնության պահանջներ, քանի որ այն չի կիրառվում գործող դատավորների նկատմամբ, այլ նոր համակարգ մուտք գործող թեկնածուների նկատմամբ: Ստուգման ընթացակարգը գրավոր է, առանց դռնբաց նիստերի: Վերջնական որոշումները հրապարակվում են, սակայն առանց հիմնավորումների և նույնականացնող տվյալների: Ամբողջական որոշումը ենթակա չէ հրապարակման:	Հրապարակայնությունը ունի 3 բաղադրիչներ՝ -բոլոր լսումները դռնբաց են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, -հավատարմագրված ԶԼՄ-ները կարող են ներկա գտնվել և լուսաբանել, - վերջնական բարեվարքության որոշումները հրապարակային են, բացառությամբ խիստ անձնական նույնականացնող տվյալների: Այլ կարգ սահմանված չլինելու դեպքում վերագնահատման ընթացակարգը պետք է համապատասխանի վարչական վարույթի պահանջներին կամ «Վարչական դատարանների կառուցվածքի, գործունեության և



	Նույն կերպ ԲԴԽ-ի կայացրած որոշումները դատավորների առաջխաղացման վերաբերյալ ամբողջական կերպով հրապարակային չեն, հատկապես պատճառների մասով:	վարչական վեճերի լուծման մասին» Ալբանիայի օրենքին: Օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ վեթինգի մարմինը հրավիրում է վեթինգ անցնող դատավորին/դատախազին դռնբաց լսումների վարչական դատավարության սկզբունքներին համապատասխան:
--	--	--

Վերոնշյալ երեք երկրների փորձի համակողմանի ուսումնասիրությունը բացահայտում է, որ բարեվարքության ուսումնասիրությունների հրապարակայնության և դրանց ազդեցության մակարդակի հարցում առկա տարբերությունները պայմանավորված են կիրառվող ընթացակարգերի առանձնահատկություններով: Այսպես, համակարգ նոր ներգրավվող պաշտոնյաների համար սահմանվում են համեմատաբար մեղմ պահանջներ, մինչդեռ գործող պաշտոնյաների համար չափանիշներն ավելի խստացված են: Սակայն այս երեք երկրներում ընդհանուր գիծը վեթինգի դասական մեխանիզմների կիրառությունն է: Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության նպատակներից ելնելով՝ այն է՝ բարեվարքության ստուգման համակարգի ամրապնդումը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ու նշանակող մարմինների հաշվետվողականության բարձրացումը, անհրաժեշտ է ոչ թե ընտրել երկու ծայրահեղ մոդելներից մեկը, այլ մշակել խելամիտ համադրություն, որը կհամապատասխանի մեր իրավական համակարգի առանձնահատկություններին և բարեփոխումների տեսլականին: Այդ նպատակով ««Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) առաջարկվում է երկու զուգահեռ մոդելների համակցված մոտեցում՝ միաժամանակ հաշվի առնելով միջազգային ստանդարտները և անձի կոնվենցիոն ու սահմանադրական իրավունքների հարգման անհրաժեշտությունը:



2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Նախագծերով առաջարկվում է դատավորների, դատախազների և քննիչների թեկնածուների ընտրության, նշանակման և առաջխաղացման գործընթացներում նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնցով հնարավոր կլինի՝

1) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացության (թե՛ դրական, թե՛ բացասական եզրակացության) միայն եզրափակիչ մասը դարձնել հրապարակային՝ թեկնածուին պաշտոնի նշանակելուց, այդ թվում՝ առաջխաղացման կարգով նշանակելուց հետո, իսկ չնշանակված թեկնածուներինը չհրապարակել՝ հաշվի առնելով դրա հնարավոր ազդեցությունը թեկնածուի անձնական կյանքի, աշխատանքային կարիերայի և հեղինակության վրա.

2) ուղղակիորեն սահմանել անձի իրավունքը՝ մասնակցելու իր բարեվարքության վերաբերյալ եզրակացության կազմման գործընթացին՝ գրավոր առարկություններ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ նյութեր ու տեղեկություններ ներկայացնելու միջոցով՝ առանց ԿԿՀ-ի պահանջի.

3) սահմանել անձի իրավունքը՝ պահանջելու իր առարկությունները կամ դրանց մի մասը հրապարակել եզրակացության եզրափակիչ մասի հետ մեկտեղ.

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ԿԿՀ կողմից բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունների հիման վրա նշանակում իրականացնող մարմինների գործունեության թափանցիկությունը՝ նպաստելով կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի ամրապնդման ռազմավարական նպատակների իրագործմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.



Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության կողմից:

5. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի ընդունումը բխում է Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «5.5. Կոռուպցիայի դեմ պայքար» ուղղությունից և ՀՀ կառավարության 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման 2-րդ հավելվածի 1.15-րդ գործողությունից: